

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՄԵՐ ԱՄՍԱԳԻՐ ՄԱՍԻՆ

Նյութագործում հրատարակվող «Հայաստանեայց Եկեղեցին», Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի պաշտոնական թերթը ուսւած տարվա հուլիս ամսաթ թիվ 9-ի «Մայր Աթոռ» վերնագրի տակ գրում է.

«Առաջնորդարանը ստացած է արդէն Մայր Աթոռոյ կողմէն հրատարակութ սկսած ամսօրեայ նոր Հանդէսին առաջին թիւը։ Մայր Աթոռոյ պաշտօնաթերթին անունն է Էջմիածին։ Այս մասին կարդալ ներկայ թիւին «Հայ Մամուլի բաժինը»։

«Հայաստանեայց Եկեղեցին» «Հայոց Մամուլ» բաժնում չարունակում է.

Խորհրդային իշխանութեան Հայաստանի մէջ Հասաւատութենէն ի վեր, եթէ, չմնք սխալիր, Մայր Աթոռոյ նախաձեռնութեամբ լոյս տեսնող տարիեկան օրացոյցներէն և կոնդակներէն զատ, առաջին պաշտօնական հրատարակութիւնն է Էջմիածինը։

Անոր մուտքը կը բացուի գեղարուեստական շրջանակի մէջ անոռուած յեր կաթողիկէ Մայր Տաճարին—խորքը Մասիս—զրաւիչ պատկերով։ Ճակատին թռչնակիր է ԶՄԻԱԾԻՆ, վերտառութեամբ։

Լայնածաւալ երկսիւնակ այս հանդէն ունի թուղթէ դիմացկուն կողք։ Պատկերազարդուած է Հայրապետական Տեղակալ Տ. Գէորգ Զէօրէքչեան եւ Ամերիկահայոց Առաջնորդ Տ. Դարեգին Յովսէփեան Արքեպիսկոպոսներու, Հռիփոփէի Վանքին լուսանկարներով։

ԷջՄԻԱԾԻՆԻՆ մէջ մասնաւոր հոգածութեամբ արձանագրուած են Մայր Աթոռոյ նախաձեռնութեամբ սկսուած «ԱՍՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ անկերու հանդանակութեան առթիւ կատարուած պաշտօնական բանակցութեանց, վոխանակուած գլխաւոր Հեռազիրներուն, Ամէն Տ. Տեղակալին կողմէ եղած կոչերուն եւ տրուած Հրահանդներուն անոնց դուած դրական արձագանքին պատճէները։ Մասնաւոր խնամքով տարուած են պատերազմական գործիքներու վեց լուսատիպ պատկերներ, որոնք ցոյց կուտան ԱՍՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԻ անունով շինուած եւ ճակատը մեկնող տանկային շարքերը։

Պաշտօնական Հաղորդագրութեանց այս բաժինին մէջ կան ինչ ինչ տեղիկութիւններ լ. Միութեան մէջ դտնուող Հայ և Ռուս Եկեղեցիներու յարաբերութեան մասին։

Ամսագիրին մնացեալ ամրող բաժինը երես 22—52 նուիրաւած է կրօնապատմական նիւթերու մշակութեան։ Աստուածաբանական տեղիքներու մօտեցուած չէ երբէք։ ԷջՄԻԱԾԻՆԻ արա առաջին Համարի մէջ պատմական

եւ բանասիրական մեծարժէք ուսումնասիրութիւններ ունին Ակադեմիկոսներ Ստ. Մալլասահան՝ ԵՐԲ ԵՆ ՀԱՅԵՐՆ ՀԵՂՈՒՆԵԼ ՔՐԻՍՏՈՆԿՈՒԹԻՒՆ, Հ. Աճառեան՝ ՀԱՅ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՑԻ ՍՏՈՅԴ ԹՈՒԱԿԱՆԸ, Գ. Լևոնեան՝ ՅՈՎՀԱՆՆԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՐԳՈՒԶ (Հոգեարք առողջապահն եւ նկարիչ Ժեղարու), Աշոտ Արրահամեան՝ ԽԱԶՈՍՈՒՐ ԵՐԿՅ ԿԱՅԱՑԵՑՈՒ ՏԱՐԵԴՐՈՒԹԻՒՆՆԵԼ Եւ Եղիկ Վարդապետ, Ս. ԷջՄԻԱՎՈՒՆԻ Մ. ՏԱՅԱՐԻ ԶԵՐԱ-ԴԻՐ ԱԽԵՏԱՐԱՆՆԵՐԸ:

Ամփոփ կերպով արդէն տեսած եղանք Մայր Աթոռոյ նոր պաշտօնաթերթին բովանդակութիւնը : Հանդէսը լոյս տեսած է Ամենապատիւ Տէր Տեղակալին հրամանով, որ իր առաջնորդող յօկուածով կը բացատրէ թէ ինչ է «ՀԱՅ ՆԿԵԼԵՑՈՒ ՊԱՐՏՔՔ ԻՐ ԺՈՂՈՎՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԻՎ» : Անոր հետագայ տողերը կը ցուցնեն թէ ի՞նչ է այս հանդէսին հրատարակութեան նպատակը :

— Հայրապետական ամսագիրը հանդիսանում է այն միջոցը, որը պէտք է համախմբի Սփիռովի րուրու հայերին իրենց սրբազան Հայրենիքի շուրջը, Մայր Աթոռի շուրջը։ Հայությանն ուղղված մեր կոչքի մէջ ասել ենք «Հայը բացի Սովորական Հայաստանից շունի այլ հայրենիք։ Հայը Հայաստանից դուքս չունի այլ հաստատուն կոռուան, բայց եթէ Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և նրան զիմաւրուգ Ամենայն Հայոց Հայրապետութիւնը Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռում»։

Այս պատգամով Հրատարակ է զայլին Հայրապետական ամսագլուխք, նոյն այդ պատգամով նա կը շարունակի իր դուռը թիւնը և հետապում:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՅ եկեղեցին խմբագրութիւնը յանուն Ամերիկայի
Հայոց Առաջնորդարանի, յանուն անոր կապուած մարմիններուն և Հաստա-
տութեանց, ցնծութեամբ կ'ողջունէ աւետաւոր ծնունդը էջՄիԱթինի և
Կըխոստամայ այսուհետեւ ալ իր կարելին ընել, որպէսզի Ամենայն Հայոց
Կաթողիկէ Մայր Տաճարին Հաստատութեան և գոյութեան լուսաւոր
Հաւատքն ու սէրը հանդէպ Յիսուս Քրիստոսի, Մայր Աթոռոյ և Խ- Հա-
յաստանի օրէցօր աւելի ամբանան և ծաւալին Սփիւռքի Հայերուն մէջ:

կԶՄԽԱԾԻՆԻ, յայտնութիւնը այս միջոցիս ուրախութեամբ և յոյշով
կը լիցնէ մը սիրտերը։ Մենք անոր միջոցաւ լսել կը պաղձանք մեր հա-
ւասոյ հօր Ս. Գրիգոր Լուսառդիչին և անոր յաջորդներուն սիրոյ և շխ-
նութեան հրաւերը, որ ամենէն սիրալի երդերէն մէկն է Հայուստանեաց
եկեղեցին։

ԵԿԱՅՔ ՇԻՆԵԱՅՈՒԹ

ՍՈՒՐԲ ԶԿՈՐՎԱՆ ԽՈՒՅԱՆ

ԳԱՆԳԻ Ի ՍՄԱ ՏԱՐԵՎԱ ՄԵԶ ԼՅՈՒ

Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ :

Digitized by srujanika@gmail.com